

ԱՆԱՆՈՒՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ
ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Քանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Անցյալից գրավոր աղբյուրներով մեզ հասած անհատական անանուն (կամ տարբեր անուններով) և ժողովրդական երգերի տարբերակումը առանձնահատուկ ու տեսականորեն ըմբռնելի օրենքներ ունի, որոնցով ղեկավարվում են մեր բնագրագետներն ու բանասերները։ Միջնադարյան երգերի գիտական մի շարք հրատարակություններում, սակայն, նկատվում են այդ օրենքներից շեղումներ և ակնհայտ վրիպումներ։ Երբեմն բանասիրական միևնույն տրամաբանությամբ են քննվում և կազմվում ժողովրդական և անհատական երգերի համեմատական բնագրերը։ Երբեմն շփոթվում են տարբերակային ընթերցվածքները գրչական տարրնթերցվածքների հետ և կորչում է տարբերակ հասկացությունը։ Երբեմն էլ չեն առանձնացվում միջնադարյան երգի լրիվ կամ պակասավոր ընդօրինակությունները տարբերակից և կամ ուշ շրջանի փշրանքները ներկայացվում են իբրև տարբերակ։ Պատահում է, անգամ, որ «գիտական համահավաք տեքստ» նշանաբանի տակ ներկայացվող «տարբերակը» որոշվում է ոչ թե տվյալ երգի գրավոր օրինակների բուն հյուսվածքների բաղդատությամբ, բնագրային շտկումների միջոցով, ոչ թե էական, իմաստային փոփոխությունները բացահայտելու եղանակով, այլ այդ օրինակների արտաքին, ձևական տարբերություններով, տողերի և տների թվաբանական հաշվումների հիման վրա։ Պատահում է նաև, որ ժողովրդական երգը որոշելու համար վճռական նշանակություն է տրվում ձեռագիր կամ տպագիր աղբյուրներում անանուն կամ տարբեր անուններով պահպանված լինելու հանգամանքին և այլն։ Այստեղ, անշուշտ, բացառվում է գիտական հայեցակետի կամ բանավեճի խնդիրը։ Գրավոր աղբյուրներով անցյալից մեզ հասած անանուն կամ տարբեր անուններով միևնույն երգի, թեկուզ տասնյակ ընդօրինակություններ կողք-կողքի դնելու և բաղդատելու դեպքում անկարելի է, որ չգծագրվի երգի անհատական կամ ժողովրդական լինելու պատկերը, շոշափելի չդառնան նրա բնույթի, կազմության առանձնահատկությունները կամ նկատելի շիինեն նրա մեջ տարբեր ժամանակների, տարբեր միջավայրերի՝ հասարակական, պատմական, կենցաղային, աշխարհագրական բնույթի միջամուխ գծերը, փոխակերպումները (խոսքը բացառիկ դեպքերի մասին չէ)։ Հարկավ, որոշ թյուրիմացություններ դալիս են անցյալից։ Միջնադարում երբեմն շփոթել, նույնացվել են ժողովրդական երգ և ժողովրդականացած երգ հասկացությունները։ Ձեռագրերի մասսայական ոչնչացումների, կորուստների, ընդօրինակումների ժամանակ գրիչների անուշադրությամբ առաջացած սխալների ու բանասիրական այլ թյուրիմացությունների հետևանքով, շատ հաճախ, լայն տարածում գտած անհատական երգերը

(«Այս ինչ կրակ էր զիս այրեց», «Վայրի հաւուկ մ'է բռնած և բերած», «Երկինք և գետինք եղբարք», «Պետրոս երազ էր տեսեր», «Մէկ ազնիվի մի սերընկայ», «Գերիս ընդօ՞ր երթամ մոլոր», «Կռունկ, ուստի կուգաս» և այլք) ընկալվել են իբրև ժողովրդական և ընդհակառակը՝ ժողովրդական երգերը վերագրվել են անհատ բանաստեղծների. տարածում գտած անհատական անանուն և ժողովրդական բազմաթիվ երգեր խառնվել են միմյանց և ժողովրդական երգ ընդհանուր անվանումով անցել սերնդից-սերունդ և հասել մեզ: Մինչդեռ որևէ երգ կարող է ժողովրդական լինել, բայց ժողովրդականացած չլինել և ընդհակառակը, որևէ երգ կարող է լինել ժողովրդային և լայն ժողովրդականություն ունենալ, բայց լինել ոչ թե ժողովրդական, այլ անհատական: Ուրեմն, տարածվածության հանգամանքը չէ, որ որոշում է երգի անհատական և ժողովրդական լինելու հարցը, երգի ժողովրդականացած լինելու չափով չէ, որ պիտի լուծվի այդ խնդիրը:

Դարձյալ հայտնի ճշմարտություն է, որ ժողովրդական ամեն մի երգի հիմքում ընկած է անհատականը, որ ժողովրդական երգը ծագում է անհատականից. ժողովուրդը հաճախ սեփականում, յուրացնում է իր սիրած երգը, նկատում է Մ. Աբեղյանը, մոռանում նրա հեղինակին: Բայց հեղինակին մոռացության տալու կամ երգը առանց հեղինակի տարածում, ճանաչում գտնելու հանգամանքը ևս չափանիշ չի կարող լինել անցյալից գրավոր աղբյուրներով մեզ հասած ժողովրդական և անհատական երգերը միմյանցից տարբերակելու հարցում: Ժողովուրդը կարող է սիրել, տարածել անհատական երգը, մոռանալ նրա հեղինակին, բայց այդ երգը մնա անհատական, չենթարկվի ժողովրդական երգի զարգացման օրենքներին, ժողովրդականանա, կամ ժողովրդայնանա, բայց չդառնա ժողովրդական երգ, պահպանի իր անհատական բնույթն ու կազմությունը:

Հայտնի է նաև, որ ժողովրդական երգն ունի բովանդակության և արվեստի իր առանձնահատկությունները, լեզուն ու ոճը, բառն ու բանը, իր մեջ պահպանում է հնագույն հավատալիքների ու սովորույթների վերապրուկներ, արտահայտում է ժողովրդի հոգեբանությունը, նրա պարզ, իրապաշտական աշխարհըմբռնումը: Սակայն այս հատկանիշները նույնպես բավական չեն իսկույն տարբերակելու անցյալից գրավոր (ձեռագիր և տպագիր) բազմաթիվ աղբյուրներով մեզ հասած ժողովրդական երգը անանուն անհատականից: Միջնադարյան ժողովրդական բանաստեղծների, հատկապես XVI—XVIII դդ. շատ գործեր իրենց արվեստով ու նյութով չեն տարբերվում ժողովրդական ստեղծագործություններից: Այդպիսի երգեր կարող են ունենալ նաև դասական բանաստեղծները: Ավելորդ է հիշատակել, որ երկնքի և երկրի, հոգու և մարմնի, արևի, լուսնի, աստղերի, ջրի և ծովի, վարդի և սոխակի, ժողովրդի կենցաղի և ըմբռնումների մեջ դարերով մտած այլ երևույթների, այսպես կոչվող թափառող թեմաների, սյուժեների շուրջը ստեղծվել են և՛ ժողովրդական, և՛ անհատական այնպիսի երգեր, որոնք միայն բանասիրական մանրադնին ուսումնասիրությամբ կարող են հատկացվել իրենց հեղինակներին՝ ժողովրդին կամ անհատին:

Ավելին ասելու համար նկատենք նաև, որ հնի վերապրուկ, ժողովրդական ոգի ու աշխարհայեցողություն ունենալու հետ մեկտեղ ժողովրդական, հատկապես քնարական երգին հիմնականում բնորոշ են՝ սեղմ, փոքր ծավալ, նուրբ կազմություն, կարճ տողեր ու տներ, բազմազան, թեթև շնչով հանգավորման

և կրկնակների բազմաթիվ ձևեր, հատկապես ռիթմիկ հանգավորման զանազան տեսակներ, երաժշտական հատուկ հնչեղություն, անպաճույճ ու անկաշկանդ ոճ և այլն: Սակայն այս բոլորը նույնպես քիչ են անցյալից ձեռագիր և տպագիր բազմաթիվ օրինակներով մեզ հասած ժողովրդական երգը անանուն անհատականից տարբերելու համար: Հիշյալ առանձնահատկություններով կան անհատական բազում երգեր. հիշենք մեկ օրինակ միայն.

Գնդէն վերև հերկեր-մերկեր,
Շապիքտ սուրմայով ներկեր,
Սիրեր եմ, չեմ կրնայ թէարկեր.
Արի, խօսինք ջորած նազլու,
Քընեց բիւրիւն, է՛լ ձէնով նազլու:

էկար անցար, ու եար էրիր,
Ձեռքտ էրէսիտ պատ էրիր,
Դուն սիրեցիր, դուն եար էրիր
Արի, խօսինք, ջորած նազլու,
Քընեց բիւրիւն, է՛լ ձէնով նազլու:

Սա XVII դարի ժողովրդական բանաստեղծ Քոսա Երեցի երգն է: Եթե նույն այս երգը մեզ հասած լիներ առանց հեղինակի անվան, անտարակույս, այն կդասվեր ժողովրդական երգերի կարգը: «Ազգային դեմքեր» ժողովածուում ներկայացված է Պ. Ղափանցու «Միլ ծիլ» երգից մեկ տուն՝ իբրև «ժողովրդին բերանին մեջ զանազան կերպով երգված մին պատառիկ»²: Ավելին՝ Հովհ. Թլկուրանցու, Նաղաշ Հովնաթանի, Պաղտասար Դպրի և այլոց բազմաթիվ երգեր վերևում նկատված շփոթ հանգամանքներում կարող էին ճանաչվել իբրև ժողովրդական: Հայ շինականը երգել ու երգում է «Որսկան ախպեր», «Մաճկալ ես, բեզարած ես», «Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ» երգերն իբրև ժողովրդական երգեր, մինչդեռ դրանք Ավետիք Բսահակյանի և Ղազարոս Աղայանի ստեղծագործություններն են և այլն:

Ուրեմն ո՛չ երգի տարածվածության չափը, ո՛չ հեղինակը կորցնելու, անհեղինակ ճանաչում գտնելու և ո՛չ ժողովրդական արվեստ ու ոգի ունենալու հանգամանքները չեն, որ կարող են բոլոր դեպքերում ճիշտ կողմնորոշել բանասերին, բնագրագետին:

Արդ, ինչպե՞ս տարբերել անցյալից գրավոր (ձեռագիր և տպագիր) աղբյուրներով մեզ հասած ժողովրդական երգը ժողովրդականացած անանուն անհատական երգից: Որն է գլխավոր չափանիշը: Որն է դրանց միջև գոյություն ունեցող ամենաէական տարբերող գիծը:

Հանրահայտ է, որ ժողովրդական երգի ծագման ու զարգացման հիմնական պայմանը բանավոր եղանակով ստեղծվելն ու տարածվելն է: Անհատական երգի առաջացման հիմնական նախապայմանը գրավոր եղանակով ստեղծվելն ու տարածվելն է: Բանասերն, ահա, որպեսզի կարողանա տարբերել ժողովրդաշունչ (ժողովրդական արվեստով) անհատական անանուն երգը ժողովրդական երգից, պետք է առաջին հերթին իր ուշադրությունը բևեռի այս

1 Ա. Մ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, XVII դարի երգիչ Քոսա Երեցը և նրա երգերը, «Բանբեր մատենադարանի», № 3, Երևան, 1956, էջ 274:

2 Ս. Երեմյան, Ազգային դեմքեր, երկրորդ շարք, Վենետիկ, 1913, էջ 174:

խնդրի վրա: Երբ բնագրագետը ձեռագիր աղբյուրների ընձեռած նյութերը և բանահավաքների կողմից ժողովրդից գրի առած ու տպագրածն է ամբողջացնում՝ գիտական հրատարակության նպատակով, այս դեպքում խիստ դիտական մոտեցումը պարտադիր է: Նա սլարտավոր է գնալ ամեն մի երգի պատմության հետքերով, կողք-կողքի դնել, համեմատել նրանից հասած օրինակները, որքան որ հնարավոր է, պարզել կրած փոփոխությունների բնույթը, չափը, որակը: Այդ դեպքում կարելի կլինի խոսել տվյալ երգի անհատական թե ժողովրդական լինելու մասին և դյուրին կլինի նաև տարբերել ժողովրդական ամբողջական երգը նրա ուշ շրջանի փշրանքներից և գնահատել համապատասխանաբար: Թե ինչ վիճակով են հասնում մեզ ժողովրդական երգերը՝ այդ մասին կարելի է գաղափար կազմել Կոմիտասի և Մ. Աբեղյանի հրատարակած «Հաղար ու մի խաղի» ծանոթագրություններից. «Մեր ձեռնի տակ ունեցած լինելով մոտ 25 հազար ֆառատողերի ժողովածու, ինչպես և ուրիշ երգերի վարիանտներ, բաղդատել ենք նույն երգերի վարիանտները և վերցրել մեր կարծիքով ընտիր համարված ձևերը... մնացած 36 երգերը մեր խմբագրությամբ են կազմված: Ժողովուրդը, սովորաբար, մի տուն միայն երգում է որևէ եղանակով և ապա իրենց ծանոթ ֆառատողերից, առանց մտքին ուշադրություն դարձնելու, շարունակության մեջ երգում է, անխորհ, այս կամ այն ֆառատողը: Մենք աշխատել ենք հաջորդ տների ընտրությունն այնպես անել, որ բոլորը միասին, որքան կարելի է մի ամբողջություն կազմեն և հարմար լինեն եղանակին և կրկնակների մասին»³: Ուշադրություն դարձնենք այս տողերի վրա. «մոտ 25 հաղար քառատողերի... և ուրիշ երգերի վարիանտներ...» բաղդատվել են և վերցվել ընտիր համարված ձևերը, որպեսզի նրանցից ամբողջություն կազմվի, իսկ մնացած 36 երգերը ներկայացվել են խմբագրությամբ: Պետք է գիտենալ, որ ժողովրդական շատ երգեր, երբ այսօր մեզ ներկայանում են իրենց ամբողջական ձևի մեջ, ծանր, մեղվաջան բանասիրական աշխատանքի բովից են անցել: Ժողովրդական երգերի ձևավորումը մի ներքին, տեական ու բարդ զարգացման ընթացք ունի, ուր խաչաձևվում, միահյուսվում են անհատական և կոլեկտիվ ստեղծագործական պոռթկումները: Դարերի հոլովումի մեջ միշտ հին ու նոր է, կենսունակ ժողովրդական երգը: Այս հանգամանքը ինքնին դժվարացնում է ոչ միայն ժողովրդական երգի ժամանակը որոշելու խնդիրը, այլ նաև՝ նրա գիտական բնագիրը պատրաստելու աշխատանքը:

«Текст фольклорного произведения — понятие значительно более сложное, чем текст литературного произведения... фольклорная текстология весьма нуждается в тщательном теоретическом осмыслении его специфических особенностей,— իրավացիորեն նկատել են արդի ուսման բանագետները⁴:

Անցյալից ձեռագիր և տպագիր աղբյուրներով մեզ հասած անհատական անանուն երգերը, ժողովրդական երգերի ճակատագիրը չունենալով, բարդ են

³ Կոմիտասի վարդապետ, Մանուկ Աբեղյան, Հաղար ու մի խաղ, Վարդապատ, 1901, էջ 167:

⁴ «Принципы текстологического изучения фольклора», М.—Л., 1966, էջ 262: Տե՛ս նաև՝ Д. С. Лихачев, Текстология на материале русской литературы X—XVII вв., М.—Л., 1962; Д. С. Лихачев, Текстология (Краткий очерк), М.—Л., 1964; К. В. Чистов, Современные проблемы текстологии русского фольклора, М., 1963.

յուրովի, բայց այս դեպքում անհամեմատ պարզ է ու դյուրին բանասերի աշխատանքը: Մնում է շշեղվել ժողովրդական երգը ժողովրդականացած անանուն անհատական երգից և ընդհանրապես անհատական երգից տարբերելու և նրանց ընագրերը պատրաստելու գիտական սկզբունքից: Խնդիրը բոլորովին այլ է, երբ, ասենք թե, միջնադարյան ձեռագրերից կամ արխիվային նյութերից հայտնի է դառնում անանուն ժողովրդաշունչ մի երգ՝ մեկ օրինակով միայն: Այս դեպքում բանասերը միայն և միայն պետք է ելնի ժողովրդական և անհատական երգերի արվեստի ու բովանդակության վերոհիշյալ բնորոշ առանձնահատկություններից: Դիտենալի է, որ ժողովրդական շատ երգեր են ծնվում ու մեռնում առանց որևէ հետք թողնելու, տարածվելու: Կենսունակ, բարձրարվեստ անգիր երգը անհնարին է, որ ինչ-ինչ ժամանակներում, ինչ-ինչ չափով տարածում գտած չլինի, իսկ երբ տարածում գտավ, բնականաբար պետք է, որ նորանոր փոփոխությունների ենթարկվի, կրի ժամանակի և միջավայրի կնիքը, նոր տարբերակներ ու փշրանքներ ստեղծի և կամ բոլորովին պետք է դուրս մնա ժողովրդական երգի զարգացման ոլորտից: Հետևաբար ժողովրդական մշակման ոլորտում, ստեղծագործական տարերային զարգացման շղթայի մեջ են ծնվում տարբերակները (ժողովրդական կենսունակ երգը չի կարող տարբերակ չունենալ: Կոմիտասը եղած տարբերակներից է վերածնել, վերահյուսել, ամբողջացրել ժողովրդական առանձին երգեր): Տարբերակների առաջացման, այսինքն ժողովրդական վերամշակման ընթացքում են հիմնականում կայունանում ժողովրդական երգի հյուսվածքի, տաղաչափության, արվեստի ու բովանդակության բնորոշ գծերը, այլապես երգը կմնար իր նախնական, «անհատական» կերպարանքի մեջ: Ուրեմն, եթե մեզ հասած գրավոր երգն իր մեկ օրինակով ժողովրդական բանաստեղծության վերևում նկատված բացորոշ, կենդանի հյուսվածքը, արվեստը, ոգին ունի, ապա պետք է կարծել, որ այն ունեցել է և իր այլ ձևերն ու եղանակավորումները (տարբերակներ, փշրանքներ), որոնք մեզ չեն հասել, կամ հայտնի չեն մեզ, հետևաբար այդ երգը (մանավանդ գիտական հրատարակության դեպքում) պետք է մուծել ժողովրդական երգի զանազանը՝ իսկ եթե այդ նույն միակ օրինակը, ժողովրդական երգի շունչ ու ոգի ունենալու հետ միասին, առավել ընդգծված անհատական, կանոնիկ բանաստեղծության հյուսվածք ունի, նշանակում է այն ծնվել ու տարածվել է հիմնականում գրավոր եղանակով, չի ենթարկվել ժողովրդական երգի ճակատագրին, պահպանել է իր սկզբնական վիճակը: Այս դեպքում էլ, ահա, այդ երգը պետք է ներմուծել անհայտ բանաստեղծների երգերի շարքը՝ իբրև անանուն բանաստեղծի գրական հուշարձան: Ձեռագրերում պատահում են նաև միջնադարյան գրչի կամ բանաստեղծի կողմից ժողովրդից լսած ու գրի առած երգեր: Կարծում ենք, որ եթե կան հավաստի տվյալներ այն մասին, թե այդ երգերը ներկայացվում են ոչ թե ժողովրդից լսած ձևի մեջ, այլ գրական մշակման ենթարկելուց հետո և դրանք չունեն ժողովրդական մշակման ուրիշ օրինակներ ու կրում են գրչի կամ բանաստեղծի անհատական մշակման կնիքը, ապա նախընտրելի է, որ այդ երգերը հրապարակվեն տվյալ գրչի կամ բանաստեղծի անունով, այնպես, ինչպես երգահանների կողմից մշակման ենթարկված ժողովրդական երգերը տպագրվում ու տարածվում են երգահանների անուններով:

Սա դեռ բոլորը չէ: «Ժողովրդական է միայն այն երգը, — նկատում է Կո-

միտասը, — ու բնագլխամբ և անմիջապես է ստեղծում մի ժողովուրդ»⁵։ Այս որոշումը չպետք է ընդունել տառացիորեն։ Անմահ Կոմիտասը դրանով ընդգծում էր ժողովրդական երգի առաջացման ու զարգացման տարբերակների հանգամանքը։ Ժողովրդական երգը կարող է առաջանալ նաև ոչ միանգամից ու անմիջապես, կամ ոչ միայն անգիր եղանակով, այլ նաև անհատական, գրավոր երգի հիմքի վրա, բայց այնուհետև ենթարկվել կոլեկտիվ մշակման, հիմք դառնալ անմիջական ու բնագլխական նոր երգերի ծագման ու առաջացման։ Ժողովրդական երգն, ահա, հարստանում է նաև այս ճանապարհով։

Ուրեմն, առաջին՝ անգիր ծնունդ և անգիր զարգացման ընթացք, երկրորդ՝ գրավոր ծնունդ և անգիր զարգացման ընթացք, այս երկու եղանակով է ծնվում ու զարգանում ժողովրդական երգն ընդհանրապես։

Արդ, ի՞նչ է տեղի ունենում.

1. Սկզբնապես անհատական երգը (բանավոր, երբեմն նաև գրավոր ծնունդով) տեղից տեղ, դարից դար անցնելով տեղի, միջավայրի, հասարակական, տնտեսական ու կենցաղային հարաբերություններին համապատասխան ձևափոխվում, կերպարանափոխվում է այնպես և այնքան, որ հաճախ կորցնում է նախնական կերպարանքը։ Կարող է փոփոխություն կրել երգի նյութը՝ թեման, գաղափարը, ոգին, բնավորությունը, արվեստը՝ հանգը, շափը, հյուսվածքը ու նրա բուն հիմքի վրա գոյանալ մեկից ավելի նոր, կենդանի ժողովրդական երգեր։

2. Զարգանալով անգիր ճանապարհով և կրելով էական փոփոխություններ, ժողովրդական երգից առաջանում են նոր միավորներ, տարբերակներ (համազոր և ոչ համազոր)։ Այդ տարբերակները ընդհանուր գծեր, նմանություններ ունենալու հետ միասին հեռանում են միմյանցից այնքան և այնպես, որ դառնում են անհամեմատելի և հաճախ դժվար է լինում որոշել, թե ո՞րն է նրանցից նախնականը, կամ ո՞րն է ավելի մոտ նախնականին, ո՞րն է ժամանակով շուտ ստեղծվել և կամ ո՞րն է որից առաջացել։ Հրատարակելով «Ահա, տեսէք, թէ ինչ կայ ծովին» սկսվածքով ժողովրդական երգի տարբերակներից մեկը, Գարեգին Հովսեփյանը դրում է. «Մեր հրատարակած այս տաղի մեջ ուշադրության արժանին նորա ժողովրդական երգերին հատուկ կազմությունն է և նույն տաղի տարբեր եղանակավորումները (վարիանտներ)։ Առանց ժողովրդական ոգու ազդեցության (այսինքն առանց ժողովրդի կողմից մշակման ենթարկվելու) անկարելի էր, որ գրական մի տաղ երեք տարբեր եղանակավորումներ (տարբերակներ) ունենար»⁶։

Տարբերակի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, նկատում է Ազբելևը, երբ առկա է ինքը տարբերակը, այսինքն, երբ այդ տարբերակները մի քանիսն են։ Բառի իսկական իմաստով միևնույն ստեղծագործության բանավոր «տեքստերը» միշտ էլ տարբերակներ են⁷։ Դա է հենց, մեր կարծիքով, ժողովրդական երգ առաջնային հասկացողությունը։

3. Ժողովրդական երգը, ծնելով մեկից ավելի համազոր և ոչ համազոր տարբերակներ (անցյալից գրավոր ընդօրինակություններով կամ գրի առնված

⁵ «Արարատ», էջմիածին, 1900, էջ 367։

⁶ Գ. Հովսեփյան, Ժողովրդական բանահյուսության հետքեր միջնադարյան տաղաշաններում, «Արարատ», 1899, էջ 44։

⁷ «Принципы текстологического изучения фольклора», էջ 271—272։

վիճակով մեզ հասած լինելու դեպքում), հնարավորություն է ընձեռում կազմելու բնագրեր՝ միմյանց նման և միաժամանակ անհամեմատելի տարբերակային խմբեր՝ այդ տարբերակներից յուրաքանչյուրի շուրջը հավաքված մեկից ավելի նման օրինակների համեմատությամբ, նրանց տարբերացվածքների ստորադաս նշումներով⁸:

Այլ է անհատական երգի ընթացքը և նրա համեմատական բնագիր կազմելու կարգը:

1. Մնվելով և տարածվելով գրավոր եղանակով, անհատական երգը կարող է ունենալ ժողովրդական երգի համն ու հոտը, տարածվածությունը, կարող է կորցնել հեղինակը, բայց չենթարկվել կոլեկտիվի մշակման, չկրնա բնազդական ու անմիջական փոփոխություններ, պահպանել իր նախկին ոգին, կերտվածքը, ամբողջականությունը, իր բնավորությունը, ժողովրդականանալ, բայց չդառնալ ժողովրդական երգ:

2. Ժողովրդականացած անանուն անհատական երգը, եթե այն, ինչպես հաստատում է Ա. Տ. Ղանալանյանը, չի հյուսվում մի քանի տարբերակներով, տարածվելով հանդերձ ժողովրդի մեջ, սեփականացվելով հանդերձ վերջինիս կողմից, չի կրում էական փոփոխություններ, չի ծնում տարբերակներ, իրավունք չունի ժողովրդական հայտարարվելու:

3. Ժողովրդականացած անանուն անհատական երգից մեզ հասած ձեռագիր և տպագիր բազմաթիվ օրինակների համեմատությունը հնարավորություն է ընձեռում կազմելու նրա ամբողջական, մեկ-միասնական բնագիրը՝ ոչ էական, գրչական տարբերացվածքների ստորադաս նշումներով:

4. Ստեղծված և տարածված լինելով գրավոր եղանակով (ձեռագիր և տպագիր օրինակներով), անանուն անհատական ժողովրդականացած երգը դարելի ընթացքում կրում է մասնակի փոփոխություններ: Լինում են տների և տողերի ետևառաջություն, գրչական աղավաղումներ, թերի ընդօրինակություններ, բառական և լեզվաոճական փոխառություններ և այլն, որոնք, սակայն, լրացնելով մեկը մյուսին, անհամեմատելի չեն դարձնում երգի բնագիրը, չեն խճողում նրա բուն ոգին, կերտվածքը, կազմությունը, հետևաբար, երգը չի ծնում նոր տարբերակներ: Երկար ճանապարհ անցնելով՝ անանուն անհատական երգը կրում է այնպիսի փոփոխություններ, որոնք հատուկ են առհասարակ ձեռագրերի շրջապատույթի մեջ ընկած և որպես սիրված երգ, մասամբ նաև անգիր հանապարհով տարածված, իրենց հեղինակների անուններով մեզ հասած գրավոր բանաստեղծության նմուշներին:

Խոսելով հայրենների մի զգալի մասի՝ իբրև սկզբնապես անհատական քնարերգության նմուշների ժողովրդականի վերաճելու դարավոր ընթացքի, այդ ճանապարհին նրանց կրած էական փոփոխությունների մասին, Մ. Աբեղյանը նկատում է, որ գրավոր, անհատական բանաստեղծությունը, որքան էլ որ այն տարածված ու ժողովրդականացած լինի, չի կարող ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որպիսիք հատուկ են ժողովրդական, անգիր երգին. «Ենթադրել քե այս բազմազան փոփոխությունները,— գրում է Մ. Աբեղյանը հայրենների մասին,— որ հատուկ են ժողովրդական երգին, ձեռագրական ծագում ունին, այսինքն արտագրողների ձեռքով են առաջ եկել,

⁸ Անդրադառնալով տարբերակին՝ Ս. Ն. Ազբելը հաստատում է Դ. Ս. Լիխաչովի այն միտքը, թե «տարբերակը» չպիտի շփոթել «տարբերացվածքի» հետ:

այդ ընդունելի չի կարող լինել: Ոչ մի անհատական գրական երկ, որ հորինվել է գրվելով և պահվել է գրավոր կերպով, նույնիսկ մեր հին հայտնի բանաստեղծների այն տաղերը, որոնք մի ժամանակ սիրված և երգված են եղել, ուրեմն և մասամբ բերանացի ավանդված, այդպիսի և այդքան փոփոխություններ չեն ունեցել ձեռագիրների մեջ: Կ. Կոստանյանցի հրատարակած Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգոր Աղթամարցու տաղերի մեջ, որոնց համար հրատարակիչը բերել է ուրիշ ձեռագրերից տարբեր ընթերցվածքներ, գտնում ենք միայն բառերի աղճատումներ, ետևառաջություն ու փոխանակություն, առանց իմաստը փոխելու և շատ-շատ՝ մի երկու տողերի կամ տների պակաս... նույնիսկ «Կոռնկ» երգի համար, օրինակ, գտնում ենք լուրջ բառական լեզվական տարբերություններ, քառյակներ միայն՝ մեկի մեջ երեքը պակաս և երկու տող միայն՝ մեկի մեջ ետևառաջ դասավորությամբ, բայց բոլորովին այլ ձևով, իսկ քառյակների դասավորությունը բոլորովին նույն կարգով է, չնայած որ այդ երգը ժողովրդականացած է, ուրեմն և ենթակա ժողովրդական երգի զարգացման...»⁹ (ընդգծումը մերն է—Շ. Ն.): Թեև Մ. Աբեղյանը չի զբաղվել «Կոռնկ» երգի պատմությամբ, սակայն ելնելով ժողովրդական երգի ծագման ու զարգացման առանձնահատկություններից և «Կոռնկի» կյանքի հիմնականում գրավոր ընթացքից, այն իրավացիորեն համարում է անհատական ստեղծագործություն:

Սրանք են, մեր կարծիքով, անանուն անհատական և ժողովրդական երգերի տարբերակման հիմնական չափանիշները և նրանց համեմատական բնագրեր կազմելու եղանակները:

КРИТЕРИИ РАЗЛИЧЕНИЯ АНОНИМНЫХ ИНДИВИДУАЛЬНЫХ И НАРОДНЫХ ПЕСЕН

Ш. А. НАЗАРЯН

(Резюме)

Различение анонимных индивидуальных и народных песен, дошедших до нас в старых письменных источниках, имеет теоретическое обоснование. Между тем в ряде научных изданий средневековых армянских песен сравнительные тексты песен этих двух типов нередко составляются исходя из одинаковых филологических критериев, вследствие чего одна и та же песня преподносится то как фольклорное, то как индивидуальное произведение. На основе анализа особенностей содержания и поэтики народных и индивидуальных песен в статье указываются способы, позволяющие отличать подлинно народную песню, дошедшую до нас в письменных печатных или рукописных источниках, от ставшей народной анонимной индивидуальной песни. Одновременно формулируются принципы составления научных текстов тех и других песен.

⁹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Բ, Երևան, 1967, էջ 127.